ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---»----------2024թ. **N ----- Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 17-Ի N106-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի ավագանու 2019 թվականի հունիսի 17-ի «Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N106-Ա որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 17-Ի N106-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկը (այսուհետ՝ Հիմնարկ) հիմնադրվել է Երևան քաղաքի ավագանու 23.04.2019թ ««Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկ ստեղծելու և դրա կանոնադրությունը հաստատելու մասին» №90-Ա որոշմամբ: Պետական գրանցումը ստացել է 20.05.2019թ (գրանցման համար՝ 286.180.1074935, ՀՎՀՀ՝ 02697772): Երևան քաղաքի ավագանու 17.06.2019թ № 106-Ա որոշմամբ հաստատվել է Հիմնարկի կազմակերպական կառուցվածքը, որը փոփոխվել է Երևան քաղաքի ավագանու 27.06.2023թ № 811-Ա որոշմամբ:

Գործող հաստիքացուցակով հաստատված ընդհանուր հաստիքների թիվը կազմում է 1111 հաստիքային միավոր, և ելնելով այն հանգամանքից,որ ստեղծման օրվանից մինչ օրս Հիմնարկը՝ տարբեր ժամանակահատվածներում փուլ առ փուլ համալրվել է տեխնիկայով, և այսօր առկա է ընդհանուր թվով 141 միավոր տեխնիկա (աղբատար, փոշեկուլ, ինքնաթափ, բեռնատար, բազմաֆունկցիոնալ մեքենաներ և տրակտորներ), որն այս տարի նախատեսվում է ավելացնել, ուստի, անհրաժեշտ են ավելի մեծ քանակով վարորդներ և համապատասխան բանվորներ: Բազմաբնակարան շենքերի աղբախցերի փակվելուց հետո Հիմնարկը սպասարկում է Երևան համայնքի ավելի քան 10500 աղբաման, որոնք կոտրվում և աղտոտվում են, ինչի համար անհրաժեշտ է ավելացնել աղբամաններն ախտահանող, պահեստի և տեխնիկական բանվորների քանակը:

Հիմնարկի ստեղծման օրվանց անցել է մոտ 5 տարի, աշխատանքների ծավալները տարեց տարի ավելանում են, և առկա ավտոտեխնիկան, աշխատելով գրեթե 24-ժամյա ռեժիմով, խաթարվում է, այդ իսկ պատճառով այն վերանորոգելու համար հարկավոր է ավելացնել Հիմնարկի տեխնիկական և տնտեսական մասերի աշխատակիցների քանակը, մասնավորապես՝ վարպետների, զոդողների, ավտոէլեկտրիկների թիվը երկու հերթափոխով աշխատանքներն իրականացնելու համար:

Աշխատանքների և աշխատակիցների քանակի ավելացման հետևանքով, նրանց ամենօրյա ընդունելու, ազատելու, ամենամյա արձակուրդ տրամադրելու, ժամանակավոր անաշխատունակության թերթիկները հաշվառելու համար Հիմնարկի փաստաթղթաշրջանառությունը կրկնակի անգամ ավելացել է, և այդ հանգամանքից ելնելով առաջացել է տնօրենի տեղակալի երկրորդ հերթափոխի հաստիքի կարիք, ինչպես նաև վերահսկողի, պահեստապետի, Աշխատակազմի կառավարման բաժինը Մարդկային ռեսուրսների կառավարման բաժնով փոխարինելու և մասնագետով

համալրելու, գնումների մասնագետի, համակարգչային տեխնիկայի օպերատորի հաստիքների ավելացնելու խնդիր:

Վերոնշյալ հանգամանքների պայմաններում Հիմնարկի գործող կազմակերպական կառուցվածքը այլևս չի նպաստում, որ Հիմնարկը լիարժեքորեն իրականացի իր կանոնադրական նպատակները, ինչպես նաև չի նպաստում Հիմնարկի զարգացմանը:

Ելնելով վերոգրյալից առաջարկում ենք կազմակերպական կառուցվածքի և հաստիքացուցակի փոփոխություն: Կից ներկայացվում է կառուցվածքի և հաստիքացուցակի առաջարկվող տարբերակը:

Առաջարկվող փոփոխությունների հիմնավորումներն ըստ առաջարկվող հաստիքացուցակի՝

<u>Վարչական մաս</u>

<u>Տնօրենի տեղակալ</u>

Ներկայիս հաստիքացուցակով առկա է մեկ փոխտնօրենի հաստիք, սակայն անհրաժեշտ է հաստիքացուցակով դարձնել երկուսը: Հաստիքի անհրաժեշտությունը անմիջականորեն պայմանավորված է նշված հաստիքը զբաղեցնող աշխատակցի կողմից իրականացվող աշխատանքների կարևորությամբ: Մասնավորապես՝ վերջինս ապահովում է Հիմնարկի կազմակերպչական աշխատանքները, և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հիմնարկն աշխատում է 24/7 գրաֆիկով, ուստի անհրաժեշտ է, որպեսզի աշխատանքների արդյունավետությունը պատշաճ ապահովելու նպատակով այն իրականացվի հերթափոխով, ըստ էության, ապահովելով Հիմնարկի կառավարման մարմնի մշտական ներկայությունը: Միևնույն ժամանակ առաջարկվում է «փոխտնօրեն» բառը փոխարինել «տնօրենի տեղակալ» բառերով:

<u>Վերահսկող</u>

Ներկայումս վարչական շրջանների աղբահանության և սանմաքրման աշխատանքների, ավտոպարկի վերահսկումն իրականացվում է 4 աշխատակցի կողմից, սակայն այն առավել արդյունավետ և պատշաճ կերպով կատարելու՝ 12 վարչական շրջաններում և ավտոպարկում պատշաճ հսկողություն իրականացնելու ու կարգապահության նկատմամբ 24-ժամյա հսկողություն ունենալու համար անհրաժեշտ է ևս 2 աշխատակից (6 վերահսկողի պարագայում հաշվի է առնվում նաև աշխատանքային օրենսգրքով սահմանված աշխատաժամանակի առավելագույն թույլատրելիությունը շաբաթական կտրվածքով և աշխատակիցների ամենամյա արձակուրդի իրավունքը):

Սանմաքրման բաժին

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Սանմաքրման հերթափոխի պետ/բաժնի պետի տեղակալն ու խմբավար պատասխանատուն ստանում են նույն աշխատավարձը՝ 300.000 դրամ, սակայն սանմաքրման հերթափոխի պետ/բաժնի պետի տեղակալը, ըստ էության, հանդիսանում է խմբավար պատասխանատուի վերադասը, ուստի՝ առաջարկում ենք սանմաքրման հերթափոխի պետ/բաժնի պետի տեղակալի աշխատավարձը սահմանել 400.000 դրամ: Աշխատանքներն ավելի ճիշտ կազմակերպելու համար առաջարկվում է 620 հավաքարարների հաստիքը պակասեցնել 250-ով՝ այն վարչական շրջաններին փոխանցելու համար, որտեղ հատկացված հաստիքներով կիրականացվի բակերի սանմաքրման աշխատանքները, իսկ Համայնքային հիմնարկի հավաքարարները կիրականացնեն փողոցների և մայթերի մաքրման աշխատանքները՝ 370 հաստիքային միավորով:

Աղբահանության բաժին

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Աղբահանության հերթափոխի պետ/բաժնի պետի տեղակալն ու գծային պատասխանատուն ստանում են նույն աշխատավարձը՝ 300.000 դրամ, սակայն աղբահանության հերթափոխի պետ/բաժնի պետի տեղակալը, ըստ էության, հանդիսանում է գծային պատասխանատուի վերադասը, ուստի՝ առաջարկում ենք սանմաքրման հերթափոխի պետ/բաժնի պետի տեղակալի աշխատավարձը սահմանել 400.000 դրամ:

Աղբահանության բաժինը աշխատում է երկու հերթափոխով՝ յուրաքանչյուր վարչական շրջանում 1 գծային պատասխանատու տրամաբանությամբ: Կենտրոն վարչական շրջանի առանձնահատկությունները հաշվի առնելով՝ անհրաժեշտություն կա գիշերային և ցերեկային հերթափոխի ժամանակ ունենալ 2-ական պատասխանատու, քանի որ ամենաշատ թվաքանակով հասարակական սննդի օբյեկտներն այնտեղ են և փաստացի ամենաշատ աղբն է կուտակվում: Մի շարք վայրերից աղբահանությունն իրականացվում է օրական մի քանի անգամ և մշտական ու պատշաճ հսկողություն է անհրաժեշտ: Պետք է հաշվի առնել նաև վարչական շրջանների այս պահին առկա 22 աշխատակիցների շաբաթական սահմանված աշխատելաժամանակի չգերազանցելու և ամենամյա արձակուրդի շրջանում նրանց փոխարինելու անհրաժեշտությունը, ուստի, առաջարկվում է բաժնի գծային պատասխանատուների հաստիքները ավելացնել 2-ով՝ յուրաքանչյուր հերթափոխի համար 2 հաստիք տրամաբանությամբ՝ աշխատակիցների աշխատանքները արդյունավետ կազմակերպելու և պատշաճ իրականացնելու նպատակով:

Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ շահագործվող աղբատար ավտոմեքենաների քանակը ավելանալու և դառնալու է 63 և ըստ այդմ աղբատար մեքենաների հետ աշխատող բանվորների թվաքանակը անհրաժեշտ է ավելացնել 50-ով (մեկ աղբատար մեքենային երկու բանվոր տրամաբանությամբ (Մանրամասն հաշվարկը ներկայացված է Ավտոպարկ բաժնում)):

Ինչպես նաև, աշխատանքային ծանրաբեռնվածությունից ելնելով, առաջարկում ենք նրանց աշխատավարձը հաստիքացուցակով հաստատել 261.000 դրամ:

Հաշվի առնելով աղբամանների առկա թվաքանակը (ավելի քան 10.500 հատ), առաջարկվում է Աղբամանների ախտահանող բանվորի հաստիքը 4-ից դարձնել 6՝ աղբամանների պատշաճ ախտահանումն ու վերանորոգումը ըստ հերթափոխի ապահովելու նպատակով՝ հաստիքը վերանվանելով աղբամաններն ախտահանող և վերանորոգող բանվոր՝ հաստիքի դրույքաչափը սահմանելով բանվորի դրույքաչափի հետ հավասար՝ 261.000 դրամ:

<u>Ավտոպարկ</u>

Հաշվի անելով այն հանգամանքը, որ Հիմնարկն իր աշխատաքներն իրականացնում է 7-օրյա ժամանակացույցով, ավտոպարկի մեքենաներն ավելացել են և այս տարի ևս ավելանալու է (ձեռք է բերվելու 6 նոր աղբատար մեքենա) և աղբատարների թիվը կհասնի 63-ի, ինչպես նաև նկատի ունենալով, որ վարորդներին տրամադրվում է շաբաթական մեկ հանգստյան օր՝ հաշվի առնելով ՀՀ աշխատանքային օրենսգրքով թույլատրելի առավելագույն աշխատաժամանակը, ժամանակավոր անաշխատունակության մեջ գտնվելու առկա վիճակագրությունը (ամսական մոտ 10 տոկոս), ինչպես նաև արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում վերջիններիս փոխարինելու համար անհրաժեշտ է ավելացնել աղբատարի 35 վարորդի հաստիք՝ ընդհանուր կդառնա 135 աղբատարի վարորդի հաստիք: Ինչպես նաև աշխատանքային ծանրաբեռնվածությամբ պայմանավորված, առաջարկում ենք նրանց աշխատավարձը հաստիքացուցակով հաստատել 380.000 դրամ:

Ավտոպարկի հերթափոխի պետի 2 հերթափոխի հաստիքը առաջարկվում է դարձնել 3 (3 հերթափոխ)՝ հիմք ընդունելով, որ ավտոպարկն աշխատում է 24/7 գրաֆիկով և հերթափոխի պետերի հանգստի և/կամ անաշխատունակության ժամանակ փաստացի փոխարինող չի լինում:

Առաջարկվում է Բազմաֆունկցիոնալ մեքենայի 40, փոշեկուլ մեքենայի վարորդի 15, տրակտոր մեխանիզատորի 20 հաստիքները միավորել և կոչել բազմաֆունկցիոնալ մեքենայի վարորդ՝ 65 հաստիքային միավորով: Սրա նպատակն է ունենալ վարորդներ, ովքեր կկարողանան վարել և՛ փոշեկուլ մեքենա, և՛ աղցան-ջրցան, և՛ տրակտոր, ինչը կնպաստի նրան, որ փաստացի չենք ունենա վարորդներ, ովքեր եղանակային պայմաններից ելնելով աշխատանք չեն կարողանում կատարել, սակայն վարձատրվում են: Օրինակ՝ փոշեկուլ մեքենայի վարորդը ձյան կամ անձրևի դեպքում փաստացի մատնվում է պարապուրդի, իսկ բազմաֆունկցիոնալ աղցանի-ջրցանի վարորդը ձմռան ընթացքում, երբ ավտոմեքենաները վերապրոֆիլավորվում են աղցանի, փաստացի աշխատում են միայն ձյան ժամանակ: Հարկ է նաև ընդգծել, որ նախատեսվող հաստիքների համար պահանջվելու է առնվազն 2 տեսակի մեքենա վարելու հմտություն և համապատասխան որակավորում, ուստի, առաջարկում ենք նրանց հաստիքային դրույքաչափը 290.000 դրամից դարձնել 320.000 դրամ:

Առաջարկվում է բեռնատարի վարորդի 5 հաստիքը դարձնել 4, քանի որ առկա է 2 բեռնատար մեքենա և հերթափոխով աշխատելու դեպքում հնարավոր է աշխատանքը կատարել 4 աշխատակցով:

Աշխատանքները պատշաճ, օպերատիվ և ըստ հերթափոխի կազմակերպելու նպատակով առաջարկում ենք պահեստապետի հաստիքը ավելացնել 1-ով՝ դարձնելով 3 պահեստապետի հաստիք, քանի որ 24/7 ռեժիմով աշխատող հիմնարկում մշտապես պահեստի բաց լինելու անհրաժեշտություն կա: Պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ պահեստապետերից որևէ մեկի հանգստի և/կամ անաշխատունակության ժամանակ փաստացի փոխարինող չի լինում և Հիմնարկի օպերատիվ աշխատանքը դրանից տուժում է:

Քանի որ առկա է երկու Գազել մակնիշի ավտոմեքենա, որոնցով իրականացվում է աշխատակիցների տեղափոխումը մարզերից դեպի Երևան, ինչպես նաև արագ արձագանքման սանմաքրման բաժնի խմբերի տեղափոխումը քաղաքի տարբեր հատվածներ՝ անհրաժեշտություն կա ունենալու 2 վարորդ՝ աշխատակիցներին սպասարկելու համար՝ հաստիքային միավորի աշխատավարձը սահմանելով 290.000 դրամ:

<u>Տեխնիկական սպասարկման բաժին</u>

Առաջարկվում է Տեխնիկական մասը վերանվանել Տեխնիակական սպասարկման բաժին, իսկ Գլխավոր մեխանիկի հաստիքը՝ Բաժնի պետ-գլխավոր մեխանիկ հաստիքով՝ հաստիքային միավորի աշխատավարձը սահմանելով 500.000 դրամ:

Հիմնարկի ստեղծման օրվանց անցել է մոտ 5 տարի, աշխատանքների ծավալները տարեց տարի ավելանում են, և առկա ավտոտեխնիկան աշխատելով գրեթե 24-ժամյա ռեժիմով՝ խափանվում է, այդ իսկ պատճառով այն վերանորոգելու և ընթացիկ սպասարկման համար անհրաժեշտ է Տեխնիկական սպասարկման բաժնում ավելացնել 7 վարպետի, 1 զոդողի, 1 ավտոէլեկտրիկի, 1 ներկարարի և 4 տեխնիկական բանվորի հաստիք: Ուսումնասիրելով աշխատաշուկայում առկա վճարման չափերը և լավ մասնագետներ ներգրավելու կարևորությունը՝ անհրաժեշտ է վարպետների աշխատավարձը 410.000 դրամից դարձնել 490.000 դրամ, իսկ ավտոէլետրիկինը, ներկարարինը և խառատինը 290.000 դրամից՝ 350.000 դրամ: Միաժամանակ հավելենք, որ վարպետների հաստիքների ավելացման արդյունքում հնարավորություն կլինի ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունն իրականացնել տեղում, այլ ոչ թե անհրաժեշտությունից ելնելով ավտոմեքենան վերանորոգելու համար ուղարկել մասնագիտական ծառայություն իրականացնող ընկերություններ, ինչն ավելի ծախսատար է և ոչ օպերատիվ:

Մեքենաների մաքրությունը ապահովելու համար առկա 2 ավտոլվացողի հաստիքը անհրաժեշտ է դարձնել 4, քանի որ ամենօրյա գրաֆիկով աշխատանքի դուրս եկող բոլոր մեքենաները լվացվում են և ֆիզիկապես 2 հոգին 24-ժամյա գրաֆիկով չեն կարող սպասարկել ամբողջ ավտոպարկը:

<u>Ֆինանսատնտեսագիտական բաժին</u>

Գործող կառուցվածքում առկա է Բաժնի պետ-գլխավոր հաշվապահի և 4 Հաշվապահի հաստիք, ինչպես նաև 1 Գնումների համակարգող-մասնագետի հաստիք: Հաշվի առնելով Հիմնարկի կողմից իրականացվող տարեկան գնումների ծավալը (ավելի քան 3 մլդ դրամ) և գնվող ապրանքների բազմատեսակ լինելը, առաջարկվում է Գնումների համակարգող-մասնագետի հաստիքը համալրել ևս 1-ով՝ գնումների գործընթացը պատշաճ և օպերատիվ կազմակերպելու նպատակով, փոխարենը առաջարկում ենք պակասեցնել հաշվապահի հաստիքը 1-ով՝ դարձնելով 3 հաստիք:

<u>Մարդկային ռեսուրսների կառավարման բաժին</u>

Առաջարկվում է Անձնակազմի կառավարման բաժինը վերանվանել Մարդկային ռեսուրսների կառավարման բաժին, քանի որ ներկայիս 2 հաստիքային միավորով, բաժինը, ամենօրյա գրաֆիկով աշխատակիցների ընդունում/ազատումների, ամենամյա արձակուրդ տրամադրելու, ժամանակավոր անաշխատունակության թերթիկները հաշվառելու աշխատանքները հնարավոր չէ պատշաճ և օպերատիվ իրականացնել, իսկ բաժնի երկու աշխատակցից որևէ մեկի արձակուրդի և/կամ հիվանդության դեպքում աշխատանքն առհասարակ կոլափսի է ենթարկվում: Ուստի, առաջարկվում է բաժնի պետի հաստիքային միավորի աշխատավարձը 400.000 դրամից դարձնել 500.000 դրամ՝ հիմք ընդունելով, որ բոլոր բաժինների պետերի աշխատավարձը պետք է լինի հավասարար: Առաջարկվում է ստեղծել Մարդկային ռեսուրսների կառավարման համակարգող մասնագետի մեկ հաստիք (ՄՌԿ համակարգող մասնագետ), հաստիքային միավորի աշխատավարձը սահմանելով 400.000 դրամ: Առաջարկվող փոփոխությունների արդյունքում բաժնիը 2 հաստիքային միավորից դառնում է 3:

<u>SS և Էլեկտրոնային հսկողության համակարգերի բաժին</u>

Հիմնարկի տրանսպորտային միջոցների տեղաշարժի, վառելիքի ծախսի, մեքենաների հետ կապված այլ տվյալների վերահսկողության համար անհրաժեշտ է էլեկտրոնային ծրագրով իրականացնել շուրջօրյա մշտադիտարկում՝ 24/7 գրաֆիկով: Այս պահին առկա թվով 17 տեխնիկայի նկատմամբ դեռևս էլեկտրոնային հսկողություն չկա, որը նախատեսվում է ևս ներդնել, ինչպես նաև մեքենաների վրա առկա GPS համակարգից բացի տեղադրել տեսախցիկներով վերահսկման համակարգ: Նշված աշխատանքը Հիմնարկի կարևորագույն հսկողական գործառույթներից է և սակավաթիվ աշխատակիցների պայմաններում այն հնարավոր չէ ավելի արդյունավետ և վերահսկելի դարձնել: Այդ իսկ պատճառով առաջարկվում է բաժնում Օպերատորի հաստիքների թիվը դարձնել 6՝ վերանվանելով հաստիքը «Համակարգչային տեխնիկայի օպերատոր», ինչպես նաև GPS համակարգի պատասխանատուի 1 հաստիք՝ համակարգչային ցանցը հսկելու և ծրագրային պատշաճ ապահովում իրականացնելու համար: Առաջարկվում է GPS համակարգի պատասխանատուի հաստիքային միավորի աշխատավարձը սահմանել 400.000 դրամ, իսկ SS և էլեկտրոնային հսկողության բաժնի պետի հաստիքային միավորի աշխատավարձը՝ 500.000 դրամ:

<u>Տնտեսական բաժին</u>

Առաջարկվում է կրճատել տնտեսական բաժնի տնտեսվարի հաստիքը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Հավելված
Երևան քաղաքի ավագանու
2024 թվականի _____.____-ի
N _____ - Ա որոշման

«Հավելված
Երևան քաղաքի ավագանու
17.06.2019թ. N106-Ա որոշման

«ԵՐԵՎԱՆԻ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՈՒՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿԻ

ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

h/h	Կառուցվածքային ստորաբաժանման անվանումը
1	Ֆինանսատնտեսագիտական բաժին
2	Մարդկային ռեսուրսների կառավարման բաժին
3	ՏՏ և էլեկտրոնային հսկողության համակարգի բաժին
4	Սանմաքրման բաժին
5	Աղբահանության բաժին
6	Ավտոպարկ
7	Տեխնիկական սպասարկման բաժին

ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

դրամ

h/h	Հաստիքների անվանումը	Հաստիք-ների քանակը	Հաստիքի ամսական պաշտոնային դրույքաչափը	Ընդամենը ամսական աշխատավարձը
	Աշխատակազմ			
1	Տնօրեն	1	850,000	850,000
2	Տնօրենի տեղակալ	2	650,000	1,300,000
3	Գլխավոր ինժեներ-ավտոպարկի պատասխանատու	1	650,000	650,000
4	Տնօրենի օգնական	1	300,000	300,000
5	Գործավար	1	250,000	250,000
6	Վերահսկող	6	300,000	1,800,000
7	Հավաքարար	2	190,000	380,000
8	Պահակ	4	200,000	800,000

հ/հ	Հաստիքների անվանումը	Հաստիք-ների քանակը	Հաստիքի ամսական պաշտոնային դրույքաչափը	Ընդամենը ամսական աշխատավարձը
	Ընդամենը	**18**		**6,330,000**
	Ֆինանսատնտեսագիտական բաժին			
1	Բաժնի պետ - գլխավոր հաշվապահ	1	650,000	650,000
2	Հաշվապահ	3	350,000	1,050,000
3	Գնումները համակարգող մասնագետ	2	400,000	800,000
	Ընդամենը	**6**		**2,500,000**
	Մարդկային ռեսուրսների կառավարման բաժին			
1	Բաժնի պետ	1	500,000	500,000
2	ՄՌԿ համակարգող մասնագետ	1	400,000	400,000
3	Մասնագետ	1	250,000	250,000
	Ընդամենը	**3**		**1,150,000**
	SS և էլեկտրոնային հսկողության համակարգի բաժին			
1	Բաժնի պետ	1	500,000	500,000
2	GPS համակարգի պատասխանատու	1	400,000	400,000
3	Համակարգչային տեխնիկայի օպերատոր	6	250,000	1,500,000
	ԸՆԴԱՄԵՆԸ	**8**		**2,400,000**
	Սանմաքրման բաժին			
1	Բաժնի պետ	1	500,000	500,000
2	Հերթափոխի պետ-բաժնի պետի տեղակալ	2	400,000	800,000
3	Խմբավար պատասխանատու	22	300,000	6,600,000
4	Հավաքարար	370	200,000	74,000,000
	ԸՆԴԱՄԵՆԸ	**395**		**81,900,000**
	Աղբահանության բաժին			
1	Բաժնի պետ	1	500,000	500,000
2	Հերթափոխի պետ-բաժնի պետի տեղակալ	2	400,000	800,000
3	Գծային պատասխանատու	24	300,000	7,200,000
4	Բանվոր	250	261,000	65,250,000
5	Աղբամաններն ախտահանող բանվոր	6	261,000	1,566,000
	ԸՆԴԱՄԵՆԸ	**283**		**75,316,000**
	Ավտոպարկ			
1	Ավտոպարկի հերթափոխի պետ (3 հերթափոխ)	3	350,000	1,050,000

h/h	Հաստիքների անվանումը	Հաստիք-ների քանակը	Հաստիքի ամսական պաշտոնային դրույքաչափը	Ընդամենը ամսական աշխատավարձը
2	Տեխզննող-դիսպետչեր	4	290,000	1,160,000
3	Աղբատարի վարորդ	135	380,000	51,300,000
4	Բազմաֆունկցիոնալ մեքենայի վարորդ	65	320,000	20,800,000
5	Բեռնատարի վարորդ	4	320,000	1,280,000
6	Պահեստապետ (3 հերթափոխ)	3	300,000	900,000
7	Աշխատակիցներին սպասարկող վարորդ	2	290,000	580,000
	ԸՆԴԱՄԵՆԸ	**216**		**77,070,000**
	Տեխնիկական սպասարկման բաժին			
1	Բաժնի պետ-գլխավոր մեխանիկ	1	500,000	500,000
2	Վարպետ	13	490,000	6,370,000
3	Զոդող	2	410,000	820,000
4	Ներկարար	2	350,000	700,000
5	Խառատ	2	350,000	700,000
6	Ավտոէլեկտրիկ	3	350,000	1,050,000
7	Տեխնիկական բանվոր	8	250,000	2,000,000
8	Ավտոլվացող	4	250,000	1,000,000
	ԸՆԴԱՄԵՆԸ	**35**		**13,140,000**
	ԱՄԲՈՂՋԸ	**964**		**259,806,000**